

իրան չէին հրաւիրում, բայց նա միշտ ուրիշ պատճառներ էր բերում և ասում էր կնոջը.

— Չես տեսնում, ինչ է, որ աղջիկդ այնտեղից վերագառնալուց յետոյ տխուր է լինում ու ժամերով երազում է պատուհանի մօտ կանգնած:

Բայց խեղճ տիկին Շէբը, որ այնքան անբախտ էր ամուսնանալուց ի վեր, աննախատես էր դարձել դրա չնորհիւ նա պնդում էր, թէ ապագայի ահից պէտք է աշխատել օգտուել ներկայից և ձեռքից բաց չը թողնել երջանկութեան վաղանցուկ բույները, որովհետեւ մարդս յաճախ ուրիշ ոչ մի նեցուկ աւսիտփանք չէ ունենում իր կեանքում բացի երջանիկ մանկութեան քաղցր յիշատակից:

Այս մէկ անգամին այնպէս դուրս եկաւ, որ պ. Շէբի ասածն էր ճիշդ:

(Լը ԵԱՐՈՒՆԱԿՈՒԻ)

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԷՅՆԷՏԻ ՆՈՐ ԵՐԳԵՐԻՅ

*
* *

Զրի Շուշանն ծովի ափին
Մըսխանլոր վեր նայեց,
Գունաս դէմքով մաշուած լուսինն
Բարեւ նորան ուղարկեց:

Ամաչելուց Շուշանն իսկոյն
Գըլիսիկը ցած խոնարհեց,
Բայց խեղճ լուսնի դէմքը սրժգոյն
Իր ոտի սակ նրկասեց...

Ջ. ԲԱԼՈՒՂԵԱՆ